ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հայաստանի Հանրապետություն
Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում

Գնումների ընդհանուր ծանուցում
Վարկ No 9389-ԱՄ
Ծրագրի ՆՀ No. P173318

Հայաստանի Հանրապետությունը դիմել է Համաշխարհային Բանկին 22,600,000 եվրոյի չափով ֆինանսավորում ստանալու նպատակով՝ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը ապրանքների, աշխատանքների, ոչ-խորհրդատվական և խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար: Ծրագիրը համաֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները.

<u>Բաղադրիչ 1. Հանրակրթության որակի բարելավում</u>

Ենթաբաղադրիչ 1.1. Դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում

Ենթաբաղադրիչ 1.2. Աջակցություն միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացմանը

Ենթաբաղադրիչ 1.3. Կրթության համակարգում տվյալների հավաքագրման և առաջընթացի մշտադիտարկման բարելավում

Ենթաբաղադրիչ 1.5 .Հանրակրթական դպրոցների վերազինում

Բաղադրիչ 2. Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը

Բաղադրիչ 3: Ծրագրի կառավարում և մոնիտորինգ

Ծրագիրը ներառում է հետևյալ գնումները.

<u>Աշխատանքների գնում</u>

- Երևանի թիվ 139 ավագ դպրոցի կառուցում /Հայտերի ներկայացման Հրավեր/բաց, ազգային /
- Լոռու մարզի Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի հիմնանորոգում/ Հայտերի ներկայացման Հրավեր/բաց, ազգային /
- Արարատի մարզի Արտաշատի թիվ 4 ավագ դպրոցի հիմնանորոգում /Հայտերի ներկայացման Հրավեր/բաց, ազգային /
- Արագածոտն մարզի Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի հիմնանորոգում /Հայտերի ներկայացման Հրավեր/բաց, ազգային /

<u>Ապրանքների գնում</u>

- Գույքի ձեռքբերում հիմնանորոգված դպրոցների համար /հիմնված կարիքների գնահատման վրա /Հայտերի ներկայացման Հրավեր/բաց, ազգային /

- Լաբորատոր սարքավորումների և նյութերի ձեռքբերում ՀՀ հարավային և հյուսիսային տարածաշրջանների դպրոցների համար /Հայտերի ներկայացման Հրավեր/բաց,միջազգային/
- Լաբորատոր գույքի ձեռքբերում ՀՀ հարավային և հյուսիսային տարածաշրջանների դպրոցների համար /Հայտերի ներկայացման Հրավեր/բաց, ազգային /
- Համակարգչային սարքավորումների ձեռքբերում ՀՀ հարավային և հյուսիսային տարածաշրջանների դպրոցների համար Հայտերի ներկայացման Հրավեր/բաց, միջազգային/.

<u>Խորհրդատվական ծառայությունների գնում</u>

- Երևանի թիվ 139 ավագ դպրոցի նախագծային և տեխնիկական փաստաթղթերի վերանայում և հեղինակային հսկողություն / որակի և գնի վրա հիմնված ընտրություն /բաց, ազգային /
- 4 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական վերահսկողություն /որակի վրա հիմնված ընտրություն /բաց, ազգային /
- Նախակրթարանների ուսուցիչների վերապատրաստում /որակի վրա հիմնված ընտրություն /բաց, ազգային /
- Վաղ զարգացման գործակցի հետազոտություն, անհատ խորհրդատուի ընտրություն/բաց/
- Կարիքների գնահատում, տեխնիկական աջակցություն ԿԿՏՀ-ի թարմացման և վիզուալիզացիոն գործիքների մշակման հարցում, անհատ խորհրդատուի ընտրություն/բաց/
- Վերապատրաստման մոդուլների մշակում և ԿԳՄՄՆ-ի աշխատակազմի, ուսումնական հաստատությունների ԿԿՏՀ համակարգից օգտվողների վերապատրաստումներ / որակի վրա հիմնված ընտրություն /բաց, ազգային /
- ԿԿՏՀ-ի նոր գործիքների փորձարկում, մշտադիտարկում և գնահատում /անհատ խորհրդատուի ընտրություն/բաց/
- Ուսուցիչների վերապատրաստում լաբորատոր սարքավորումների օգտագործման նպատակով /անհատ խորհրդատուի ընտրություն /բաց/
- ՆՄՀ դրամաշնորհային հայտերի գնահատում /անհատ խորհրդատուի ընտրություն,/բաց/
- Օժանդակություն ՆՄՀ իրականացմանը /անհատ խորհրդատուի ընտրություն, բաց/
- ՆՄՀ ծրագրերի աուդիտ/ Նվազագույն գնի ընտրություն, /ազգային/
- Ծրագրի աուդիտ/ Նվազագույն գնի ընտրություն, /ազգային/
- Ծրագրի բնապահպանական մասնագետ,/անհատ խորհրդատուի ընտրություն, բաց/:

Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող գնումները իրականացվելու են համաձայն Գնումների Կանոնակարգեր Ներդրումային ծրագրերի ֆինանսավորման (IPF) վարկառուների համար թվագրված հունիս 2016, վերանայված նոյեմբեր 2017, օգոստոս 2018 և նոյեմբեր 2020 (այսուհետ կարգավորումներ), և բաց կլինեն բոլոր իրավասու կազմակերպությունների և անհատների համար՝ համաձայն Գնումների կանոնակարգերի: Ծրագրի բանակցություններից հետո, Համաշխարհային Բանկը իր հավանությունը տալուն

պես իր կայքում կիրապարակի նախնական համաձայնեցված գնումների պլանը և դրա հետագա վերանայված տարբերակները:

Գնումների հատուկ ծանուցումները բաց միջազգային մրցակցային ընթացակարգով գնման ենթակա պայմանագրերի վերաբերյալ, հասանելի դառնալու պահից, կտեղադրվեն *UN Development Business* առցանց հարթակում, Համաշխարհային Բանկի կայքում, ՀՀ ֆինանսների նախարարության գնումների կայքում՝ *www.procurement.am*, էլեկտրոնային գնումների *www.armeps.am* կայքում:
Հետաքրքրված իրավասու կազմակերպությունները և անհատները, որոնք ցանկանում են հայտ ներկայացնել ծրագրի շրջանակներում ապրանքների գնման աշխատանքների իրականացման, ոչ-խորհրդատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման համար, կամ ովքեր ցանկանում են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ, կարող են դիմել Պատվիրատուին հետևյալ հասցեներով.

«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ
Տնօրեն՝ Գրիշա Հովհաննիսյան
Ս. Վրացյան 73, Երևան 0070, ՀՀ
Հեռ. (+374) 57-56-90 (11)
E-mail: info@cfep.am
Կայքի հասցե՝ www.cfep.am